ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 02.08.2018 թվականի թիվ 20 որոշումը:

Առդիր 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» օգոստոսի 2018 թվականի N 20

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-095-0041-0022 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.04.1991 թվականի թիվ 130/9 որոշումը, հողամասի և շենք-շինությունների համար կազմված հատակագծերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի 06-095-0041-0022 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.1 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Մարինե Կոլյայի Անտոնյանի սեփականության իրավունքը:
2. Ճանաչել 06-095-0041-0022 ծածկագրով 0.1 հա հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 1992 թ. կառուցված 89.01քմ բնակելի տան նկատմամբ Մարինե Կոլյայի Անտոնյանի սեփականության իրավունքը:
3. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքացիական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները. որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 1-ին փողոց, 6-րդ նրբանցք, 1-ին փակուղի, 1 բնակելի տուն::
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ